Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019թ. դեկտեմբերի 11-ից 13-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արտակ Քամալյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019թ. դեկտեմբերի 11-ից 13-ը

4. Հրավիրող կողմը՝

ԱՊՀ գործադիր կոմիտե

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն ԱՊՀ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով միջկառավարական խորհրդի նիստին

6. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել են՝

- ԱՊՀ մասնակից պետություններում ագրոարդյունաբերական համալիրի բնագավառում իրավիճակը 2018թ-ին,
- մինչև 2025թ. ԱՊՀ ագրոարդյունաբերական համալիրի գիտական ապահովման և ագրարային գիտության զարգացման հայեցակարգի նախագիծը,
- ՌԴ գյուղատնտեսական արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական արդիականացման ծրագրի իրագործման փորձը,
- գյուղատնտեսական մեքենայացման բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության հայեցակարգի նախագիծը,
- ԱՊՀ մասնակից պետություններում խաղողագործության և գինեգործության զարգացման հայեցակարգի նախագիծը,

- ԱՊՀ մասնակից պետությունների տարածքում մորեխների տարածման կանխարգելման միջոցառումների համալիրը,
- ԱՊՀ մասնակից պետությունների բանջարաբուծության զարգացման հայեցակարգը,
- ՌԴ-ում գյուղատնտեսության թվային վերափոխման հարցը,
- ՌԴ-ի անասնաբուծության տոհմային հիմքի և ձկնաբուծության համալիրի զարգացումը,
- ագրարային կրթության բնագավառում կադրերի վերապատրաստման ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության հաշվետվությունը,
- ԱՊՀ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով միջկառավարական խորհրդի 2020թ. միջոցառումների ծրագիրը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը՝

Նիստն անցկացվեց ՌԴ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Ջամբուլաթ Խատուովի նախագահությամբ:

Նիստի ընթացքում ներկայացվեցին 2018 թվականի ընթացքում ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտում կատարած աշխատանքներն ու գրանցած արդյունքները: Նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքին՝ հատուկ կարևորվեց դեպի ԱՊՀ երկրներ արտահանվող գյուղատնտեսական ապրանքների լոգիստիկային վերաբերող խնդիրների, ինչպես նաև «Կանաչ միջանցք» համակարգի խնդիրների լուծման հնարավոր ուղիների քննարկումը գործնական մակարդակում: Բացի այդ, ընդգծվեցին գիտակրթական ագրարային հաստատությունների գործունեության համակարգմանը և փորձի փոխշահավետ փոխանակմանն առնչվող հարցադրումները:

Խոսելով համատեղ ծրագրերի մասին՝ նիստի մասնակիցներն առանձնացրեցին հիմնական խնդիրները, որոնց լուծումը կհանգեցնի երկրների միջև համագործակցության հետագա խորացմանը: Դրանք ներառում են երկրների բուսասանիտարական և անասնաբուժական անվտանգության ապահովումը, առևտրի խոչընդոտների վերացումը, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի սորտերի և հիբրիդների, ագրոքիմիկատների, ագրոտեխնիկայի և սարքավորումների փորձարկումների անցկացման ազգային մեթոդաբանության համաձայնեցումը և ներդաշնակեցումը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ԱՊՀ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով միջկառավարական խորհրդի հաջորդ նիստն անցկացնել 2020 թվականին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Կարծիքների փոխանակման արդյունքում առաջարկվել է ռուսական կողմի հետ քննարկել հայ ուսանողների, երիտասարդ գիտնականների և դասախոսների՝ ՌԴ առաջատար ագրարային բուհերում, մասնավորապես՝ Տիմիրյազևի անվան Ռուսաստանի պետական ագրարային համալսարանում, կրթության և վերապատրաստման նպատակով տրամադրվող քվոտաների հարցը:

Բացի այդ, առաջարկվում է նաև շարունակել Հայաստանում Վերլուծական կենտրոնի ստեղծման ուղղությամբ համագործակցությունը ռուսական կողմի հետ՝ վերլուծական բնույթի անհրաժեշտ նյութեր և մեթոդական աջակցություն ստանալու ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

12/17/2019

X

ԱՐՏԱԿ ՔԱՄԱԼՅԱՆ

Signed by: KAMALYAN ARTAK 1905700881

17 դեկտեմբերի 2019թ.